ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **ասֆալտապատման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ԳՀԱՇՁԲ-2018/1-ԵՊԲՀ>>** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի հուլիսի 31-ին** կնքված N **<<ԳՀԱՇՁԲ-2018/1-ԵՊԲՀ>>** պայմանագրում **2018 թվականի օգոստոսի 30-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ աշխատանքների կատարումն իրականացվելու է մինչև 2018 թվականի օգոստոսի 30-ը, սակայն անհրաժեշտություն է առաջացել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգել:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետ:

Պատվիրատու՝ **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

31.07.2018թ. կնքված N <<ԳՀԱՇՁԲ-2018/1-ԵՊԲՀ>> գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան <<30>> 08 2018 թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<ՇԻՆՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ն**, ի դեմս Ընկերության տնօրեն **Տ. Նազարյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 31.07.2018թ. կնքված N <<ԳՀԱՇՁԲ-2018/1-ԵՊԲՀ>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ, 8.6-րդ կետերը, <<ՇԻՆՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ի կողմից 28.08.2018թ.-ին ներկայացրած թիվ 9412 գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգել և սահմանել մինչև 2018 թվականի սեպտեմբերի 09-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>	<<ԿԱՊԱԼԱՌՈՒ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ	**<<ՇԻՆՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Հասցե՝ ք. Երևան, Աշտարակի խճուղի 47/18**
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Բանկ՝ <<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ**
Հ/Հ 11500166513800	**Հ/Հ 220553330550000**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 00891777**
	Էլ. փոստ՝ shinplyus@mail.ru
	Հեռ. 077-77-77-67
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**Տնօրեն՝ Տ. Նազարյան**
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ